ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ,
abekaryan@mail.ru

ՄՈՆՐԵԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ «ՄԱՄԻԿՈՆՅԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1962–1968)

Բանալի բառեր՝ *Սփյուռք, մոնրեալահայ գաղութ, եկեղեցի, «Մամիկոնյան» մշակութային միություն, «Հայ կուն», թատերախումբ, «Բուրաստան» հանդես:*

Մոնրեալի հայ գաղութը սկսել է ձևավորվել դեռևս 1920-ական թվականներին, սակայն հայերն այստեղ հիմնականում հաստատվել են 1950-ական թվականների կեսերից[1]: Մերձավոր Արևելքի երկրներում ենթարկվելով քաղաքական ու տնտեսական հալածանքի՝ հայերն ստիպված եղան լքել տասնյակ տարիների ընթացքում ստեղծած իրենց «տունն ու եկեղեցին, դպրոցն ու ակումբը, թափառական հայու ցուպը դարձեալ ձեռք առած եկած ու հաստատուած էին Գանատայի այս հեռաւոր ափերը»[2]: Այստեղ արժե նշել, որ օտարության մեջ ապրող հայերը, մի անգամ ևս ընտրելով անծանոթ և անապավեն տարագրության ուղին, իրենց հետ բերեցին այն, ինչ անբաժան էր իրենց արյունից ու էությունից՝ պատվասիրության, ազգային արժանապատվության բարձր զգացումը: Նույնիսկ երկու հարյուր հոգուց պակաս հայ տղամարդիկ ու կանայք, 1950-ական թվականների կեսերին հաստատվելով Մոնրեալում՝ անստույգ, անորոշ ապագայով, սկսել են խոսել, խորհել, վիճաբանել, երազել ոչ թե անձնական բարօրության, սեփական ընտանիքի կերտման ու վայելք-

[1] Կանադահայ գաղութի կազմավորման և զարգացման մասին մանրամասն տե՛ս մեր հետևյալ հոդվածները Կանադահայ գաղութի պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, 565/1, էջ 21–29. Կանադահայ գաղութի կազմավորումը, «Բանբեր Երևանի համալսարանի», Հասարակական գիտություններ, 1996, 89/2, էջ 52–64. Կանադահայ գաղութի զարգացումը, «Բանբեր Երևանի համալսարանի», Հասարակական գիտություններ, 1998, 95/2, էջ 43–53:

[2] **Սէֆէրեան Ն.,** *Քսանամեակ Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ շաբաթօրեայ վարժարանի*, Հորիզոն, Մօնթրէալ, 1980, 19 մայիսի, 2:

ների, այլ օտարության մեջ ազգապահպան աշխատանքին լծվելու, հայեցիությունը պահպանող տաճարների և օջախների ստեղծման մասին[3]:

Դեռևս 1920-ական թվականների վերջերին, Մոնրեալ գաղթած փոքրաթիվ հայերը Նյու Յորքի Առաջնորդարանի հովանու ներքո անմիջապես կազմավորել են ծխական խորհուրդ, որն էլ հետագայում հանդիսացել է Մոնրեալի Հայաստանյայց առաքելական Սուրբ եկեղեցու ստեղծման հիմնաքարը (1957-ին Կանադայի իշխանությունները ստորագրել են երկրում եկեղեցու պաշտոնական ճանաչման դիմումը): Սկզբնական շրջանում, եկեղեցական արարողությունները՝ տարին չորս անգամ, կատարվել են հրավիրված հոգևորականի կողմից, սեփական տներում և վարձու սենյակներում, իսկ 1962-ին գնվում է երկու հարակից շինություն, որոնցից մեկը դառնում է Մոնրեալի հայ համայնքի կենտրոնը և անվանվում «Հայ տուն», որտեղ անցկացվում են հավաքույթներ, ժողովներ, ճաշկերույթներ, դասախոսություններ, թատերական և մշակութային երեկույթներ, հայոց լեզվի դասավանդում և այլ միջոցառումներ: Եկեղեցին այստեղ դառնում է գաղթական հայի միակ հոգեկան հենարանը, նրա մխիթարության, քաջալերության, ուժի և հույսի աղբյուրը:

Ինչպես սփյուռքի առաքելական բոլոր եկեղեցիները, այնպես էլ Մոնրեալի թեմը հայի համար չի հանդիսացել լոկ կրոնական հաստատություն, այլ ծառայել է որպես կարևոր ազդակ՝ հայերի միասնականության և ազգապահպանության գործում: Նրա ծոցից են ծնունդ առել Մոնրեալում գործող գրեթե բոլոր հայապահպան և ազգային կազմակերպությունները՝ կուսակցական, բարեգործական, մշակութային, երիտասարդական և այլն: Եկեղեցու անդամների որոշմամբ և քվեարկությամբ է ընտրվել Կանադական հայկական կոնգրեսի (Canadian Armenian Congress) Մոնրեալի վարչությունը, որն զբաղվել է հայերի Կանադա գաղթելու գործերով: Մոնրեալի եկեղեցին մինչև 1962 թվականը չի ունեցել իր սեփական տաճարը, սակայն ունեցել է Կանադայի կառավարության կողմից տրված բոլոր պաշտոնական իրավունքները՝ վավերացնելու հայ համայնքի ծննդի, ամուսնության և մահվան արձանագրությունները: Եկեղեցին ունեցել է նաև իր մշտական հոգևոր հովիվը, եկեղեցական արարողությունները կատարվել են յուրաքանչյուր կիրակի՝ Մոնրեալի Անգլիկան եկեղեցու կողմից սիրահոժար տրամադրված մատուռում:

Եվ այսպես, սկսած 1962-ից Մոնրեալի ազգային եկեղեցին և հայ համայնքն ունեցել են իրենց գործունեության կենտրոնը՝ «Հայ տուն» անվանու-

[3] Հայաստանեայց Եկեղեցւոյ դերը Մօնթրէալի հայ գաղութի կազմութեան մէջ, Բուրաստան, 1967, թիւ 50, էջ 9:

մով: «Հայ տունը» մոնրեալահայերի համար, իրոք, դարձել է հայ մշակույթի ու հավատքի պահպանման բացառիկ կենտրոն[4]: Ելնելով դրանից, մոնրեալահայերն անտարբեր չեն մնացել մշակույթի հանդեպ, և եկեղեցու հովանու ներքո հավաքվել են «Հայ տան» մեջ և ստեղծել բազմաթիվ հանձնախմբեր ու վարչություններ, մշակութային, բարեգործական, կանանց, երիտասարդական, հայրենակցական, մարզական և այլ կազմակերպություններ, շաբաթօրյա և կիրակնօրյա վարժարաններ: 1963-ից լույս է ընծայվել «Բուրաստան» եկեղեցական, գրական և մշակութային ամսաթերթը (հետագայում՝ կրոնաբարոյական, մշակութային երկամսաթերթ): Ցավոք, այնպիսի հեղինակավոր հանրագիտարանում, ինչպիսին է «Հայ Սփյուռք հանրագիտարանը», տեղ է գտել անճշտություն՝ «Բուրաստան» երկամսյա (չնայած այն նախապես եղել է մեկամսյա) հանդեսի լույս ընծայման սկիզբ համարվել է 1964 թվականը, մինչդեռ այդ թվականը դրա հրատարակության երկրորդ տարին է[5]:

1960-ական թվականներին Մոնրեալում հայերի թվաքանակի արագընթաց և զգալի աճը հայ համայնքի առջև դրեց նոր հիմնախնդիր. անհրաժեշտություն դարձավ ձեռք բերել ավելի մեծ և ավելի հարմար հողակտոր՝ եկեղեցի և մշակութային կենտրոն կառուցելու համար, քանի որ «Հայ տունը» արդեն մեծ դժվարությամբ էր կարողանում ապահովել օրեցօր աճող ու ծավալվող մոնրեալահայ գաղութի կրոնական, մշակութային ու կրթական պահանջմունքները, հատկապես հայոց լեզվի պահպանումը և հայ զավակների հայեցի դաստիարակության գործընթացը: Բացի դրանից, «Հայ տունը», որտեղ կատարվում էին նաև եկեղեցական արարողություններ, եկեղեցական կառույց չէր, իսկ «հայ ժողովուրդը, ուր որ գտնուած է եւ ինչ պայմաններու ալ տակ, իր գոյատեւումը պահպանելու եւ զայն յաջորդ սերունդներու փոխանցելու մտահոգութեամբ եւ վճռական կամքով գիտցած է իր լումաներով կառուցանել իր սեփական եկեղեցին, իր սեփական դպրոցը եւ իր սեփական մշակութային

[4] **Մէթր Հ. Սիմպիլեան,** Մշակոյթը (խմբագրական), Բուրաստան, 1964, 16, էջ 1–2:

[5] Տե՛ս Հայ Սփյուռք հանրագիտարան, Ե., 2003, էջ 335 և 341: Այդ անփութությունն առավել ևս անհասկանալի է, քանի որ վերոհիշյալ հանրագիտարանի «Կանադա» բաժնի հեղինակը կանադահայ Ն. Ուզունյանն է, ով երկար տարիներ եղել է Մոնրեալի Հայաստանյայց առաքելական Սուրբ եկեղեցու «Մամիկոնեան» մշակութային միության ատենադպիրը և ատենապետը: Ի դեպ, հանրագիտարանի այդ բաժինը, մեր կարծիքով, ներկայացված է բավական պարզունակ, մակերեսային, ոչ լրիվ և զերծ չէ առանձին թերություններից (օրինակ, էջ 332-ում սխալմամբ նշվում է, որ Ջորջթաունի տղաները 1936-ին են հրատարակել «Արարատ» ամսագիրը, իսկ էջ 341-ում արդեն բերված է ճշգրիտ տարեթիվը՝ 1926):

կեդրոնը»[6]: Մոնրեալի հայ գաղութը, չնայած այն հանգամանքին, որ նորաստեղծ էր և բաղկացած էր տարբեր երկրներից գաղթած ու տարբեր ըմբռնումներ ունեցող հայորդիներից, չէր կարող բացառություն կազմել և մոտ ապագայում նույնպես պետք է ունենար իր սեփական եկեղեցին, դպրոցը և սեփական մշակութային կենտրոնը: Այդ մասին հիշատակում է նաև Կ. Պոլսի «Մարմարա» թերթը[7]: Իրոք, 1965-ին եկեղեցին քաղաքի գեղատեսիլ վայրերից մեկում մոնրեալահայերի ինքնաբուխ նվիրատվություններով գնում է հողատարածք[8], հետագայում ստանում է նաև քաղաքապետարանի արտոնագիրը[9]:

Սակայն, նոր եկեղեցի չի կառուցվում, այլ՝ 1970-ին, «օտար եկեղեցիի մը գետնայարկի մատուռէն, մեծ ոստում մը կատարելով», գնվում է մի ընդարձակ կալվածք՝ «իր հսկայ տաճարով, յարակից սրահներով, բազմաթիւ սենեակներով եւ այլ յարմարութիւններով»[10], որը նույն թվականին անհրաժեշտ նորոգման, բարեկարգման ու հարդարման աշխատանքներից հետո օծվում է որպես առաջնորդարան՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ անունով:

Ինչպես տեղեկանում ենք «Բուրաստան» ամսաթերթից, 1962-ի փետրվարի 21-ին և 22-ին Մոնրեալի հայ համայնքի մի քանի խանդավառ անդամներ, հիմնականում՝ պոլսահայեր, ձեռնամուխ են եղել «Վարդանանք» ողբերգության բեմադրությանը, որից ցուցադրել են ընդամենը երկու արար[11]: Հավանաբար, բեմադրել են հատվածներ արևմտահայ գրող, մանկավարժ, հասարակական գործիչ Սմբատ Բյուրատի (Տեր-Ղազարենց, 1862–1915) «Ավարայրի արծիվը կամ Վարդանանք» երկից, քանի որ այդ երկը 1960-ական թվականներին, ինչպես նշում է Կարո Շամլյանը, Վարդանանց մասին գրված «գործերէն միակն է որ տակաւին կ'երեւի մեր բեմերուն վրայ»[12]: Ներկայացումը հանդիսականներն ընդունել են ջերմությամբ, իսկ դերակատարները՝

---

[6] Սեփական եկեղեցի, դպրոց եւ մշակութային կեդրոն (խմբագրական), Բուրաստան, 1967, 50, էջ 1:

[7] **Յովնանեան Յ.,** Գանատահայ լուրեր Մոնթրէալէն, Մարմարա, 1965, 12 մայիսի, էջ 2:

[8] Տե՛ս **Քէսթէքեան Յ.,** Աւետիս Մոնթրէալի հայ ժողովուրդին. Հայաստանեայց եկեղեցւոյ հողը գնուած է, Բուրաստան, 1965, թիւ 28, էջ 7–8:

[9] Սեփական եկեղեցի, դպրոց եւ մշակութային կեդրոն (խմբագրական), Բուրաստան, 1967, 50, 3:

[10] Մեր եկեղեցին՝ տասը տարի ետք (խմբագրական), Բուրաստան, 1980, թիւ 200, էջ 2:

[11] Տե՛ս Մամիկոնեան մշակութային միութիւն, Բուրաստան, 1965, թիւ 23–24–25, էջ 15:

[12] **Շամլեան Կ.,** Վարդանանց եղելութիւնը մեր մշակոյթին մէջ, Բուրաստան, 1968, 55, էջ 21:

ոգևորված հաջողությունից, որոշում են ստեղծել մի թատերախումբ և իրենց առաջին ներկայացման պատվին այն անվանել «Մամիկոնյան»: Թատերախմբի ատենապետուհու և բեմադրիչի պարտականություններն ստանձնել է Էլդա Աքքիպրիթյանը[13], Մոնրեալի «փոքր նորակազմ» գաղութի «տիպար հայուհի մը», ով «դժուարութիւններու դէմ, մաքառող, վճռական կին մը եղած է»[14]:

1962–1964 թվականների ընթացքում վերոհիշյալ թատերախումբը Մոնրեալի Ուկրաինական սրահում Է. Աքքիպրիթյանի բեմադրությամբ հայ հասարակայնությանը ներկայացրել է մի շարք թատերգություններ: Այսպես, 1962-ի սեպտեմբերի 10-ին ներկայացվել է Հ. Ամիրենցի «Թիւ 5 խելագարը»[15] զավեշտախաղը, 1963-ի մարտի 9-ին՝ «Վարդանանք» ողբերգությունը (ամբողջությամբ), իսկ 1964-ի փետրվարի 23-ին՝ «48 օխանոց գլխու փորձանքը» երեք արարով զավեշտախաղը: Այդ նույն թվականին էլ թատերախումբը ներկայացնում է «քրքչալիր զավեշտ մը՝ բազմաթիվ անգամներ Պոլսոյ եւ զանազան վայրերու մէջ ներկայացված եւ մեծ ժողովրդականութիւն շահած Գրիմ Սիմոնի[16] «Հարս եւ կեսուր» կատակերգությունը»[17]:

1963-ի ապրիլի 6-ին Մոնրեալի եկեղեցու ծխական խորհրդի որոշմամբ «Հայ տան» սրահում կազմակերպվել է երեկույթ՝ նվիրված «Մամիկոնեան»

---

[13] Աքքիպրիթյան Էլդա (ծնվ. 1930, Կ. Պոլիս) – ավարտել է Բանկալթիի (Կ. Պոլիս) Անաղարտ հղության հայ կաթոլիկ քույրերի Ս. Հռիփսիմյանց վարժարանը: 1957-ին հաստատվել է Կանադայում: Երկար տարիներ եղել է «Մամիկոնեան» թատերախմբի ատենապետուհին, որին հետագայում փոխարինել են Նուրհան Ուզունյանը, Արաքսի Արթինյանը, Սելմա Քեքլիկյանը և ուրիշներ:

[14] Մամիկոնեան թատերախումբը եւ գեղարուեստական կեանքը Մօնթրէալի մէջ, Մարմարա, 1964, 12 ապրիլի, 3:

[15] Տե՛ս Յ-Յ-Յ. Ամիրենց (Յովհաննէս Ամիրեան), Թիւ 5 խելագարը, Քրքչալիր կատակերգութիին, Երեք արար եւ մէկ պատկեր, Կ. Պոլիս, 1921: Պոլսահայ երգիծաբան Հովհաննես Ամիրենցը (Ամիրյան, 1872–1966) խմբագրել է «Զուռնա» երգիծական թերթը, հրատարակել «Ծիծաղներ» (1909), «Աղջիկներու լօթարիան» (1914), «Անկուտիներուն տարեցոյցը» (1915, 1919, 1921, 1922), «Ակնցի Հաճի աղան եւ սամաթիացի Գոհար տուտուն» (1920), «Սինէմա հի, հի, հի, հա, հա, հա» (3 պրակ, 1921) գործերը և այլն: Հետագայում ձեռնադրվել է հոգևորական և մեկնել Բուենոս Այրես, դարձել տեղի հայոց քահանան:

[16] Գրեմ Սիմոն (Սիմոն Էքմեքճյան, 1891–1962), սփյուռքահայ երգիծաբան, դերասան, ստորագրել է նաև Զինվոր Սիմոն, Սիմոնե, Էշեք Սիմոն և այլ ծածկանուններով: Նվիրվել է արվեստի զանազան ճյուղերի՝ երգիծական ոտանավորներից մինչև թատերգություններ, աշխատակցել է պոլսահայ մամուլին՝ «Կավռոշ», «Հոս-հոս», «Կիկօ» և այլն: Հանրահայտ կատակերգություններն են՝ «Դայի Կարապետ» և «Հարս ու կեսուր»:

[17] Մօնթրէալի «Մամիկոնեան թատերախումբ»-ի կոչը հայ երիտասարդութեան, Բուրաստան, 1964, թիւ 15, էջ 15:

թատերախմբին, որտեղ բարձր գնահատականի է արժանացել ինչպես թատերախմբի, այնպես էլ դրա ատենապետուհի և բեմադրիչ Է. Աքքիպրիթյանի գործունեությունը: Մասնավորապես նշվել է թատերախմբի վերջին՝ «Վարդանանք» թատերգության շատ հաջող բեմադրությունը (խոսքը 1963-ի մարտի 9-ի բեմադրության մասին է): Երեկոյթին ներկա են եղել նաև Շարլ Ազնավուրի մայրը և դուստրը[18]:

1964-ի դեկտեմբերին թատերախումբը համալրվում է նոր ուժերով, ընդլայնում իր գործունեության շրջանակը և վերակազմավորվում է որպես «Մամիկոնեան մշակութային միություն, որի «*միակ նպատակն է* (ընդգծումը մերն է – Ա.Բ.), մեր ազգային արուեստի լեցուն գանձարանը բանալ մեր ժողովուրդին առջեւ եւ անկէ կաթիլ առ կաթիլ ծանօթացնել Հայ Արուեստին հրաշալիքները»[19]: Միության վարչության անդրանիկ կազմում ընդգրկվել են Արժանապատիվ Տեր Ղևոնդ քահանա Փափազյանը (հովիվ), Էլդա Աքքիպրիթյանը (ատենապետուհի), Հակոբ Քեսթեքյանը (փոխատենապետ), Նուրհան Ուզունյանը (ատենադպիր), Արամ Մելքոնյանը (փոխատենադպիր) և այլք[20]:

Իրոք, «Մամիկոնեան» մշակութային միությունը, բացի ներկայացումներից, հետագայում կազմակերպել է բազմաթիվ մշակութային երեկոյթներ: Այսպես, 1965-ի հունվարի 30-ին «Հայ տան» մեջ կազմակերպվել է առաջին մշակութային երեկոն՝ նվիրված հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հիշատակին: Մեծ բանաստեղծի ստեղծագործություններից արտասանվել են հատվածներ: Երեկոյթի ուշագրավ պահերից էր Հ. Թումանյանի «Թագավորը և չարչին» ոտանավորի դրամատիկ մատուցումը և «Անուշ» օպերայից մեներ գի կատարումը: Երեկոյի ընթացքում Պետրոս Գույումճյանն[21] ունկնդիրներին է ներկայացրել իր վերջին բանաստեղծությունը՝ նվիրված «անմահ

[18] Տե՛ս Մամիկոնեան թատերախումբի նուիրուած երեկոյթ, Բուրաստան, 1963, 2, էջ 15–16:

[19] Մամիկոնեան մշակութային միութիւն, Բուրաստան, 1965, թիւ 23–24–25, էջ 16:

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

[21] Գույումճյան, Պետրոս (1910–1965), սփյուռքահայ մանկավարժ, բանաստեղծ, լրագրող: Հաճախել է Կ. Պոլսի Վիեննայի Մխիթարյան միաբանության վարժարանը, բայց չի ավարտել: Երկար տարիներ աշխատակցել է Կ. Պոլսի «Ժամանակ» թերթին և «Կավռոշ» երգիծական հանդեսին: Քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով հեռացել է Թուրքիայից և երկար դեգերումներից (Սիրիա, Ֆրանսիա, Մոնրեալ) հետո ի վերջո հաստատվել է Տորոնտոյում: Աշխատակցել է «Բուրաստան» ամսաթերթին:

քերթողապետ» Հովհաննես Թումանյանին և «Մամիկոնեան» մշակութային միությանը[22]:

Երեկույթ-հանդեսը մեծ տպավորություն է թողել ներկաների վրա, որոնք դժվարությամբ են հեռացել «Հայ տնից»[23]:

1965-ի մարտի 6-ին, «Մամիկոնեան» մշակութային միությունը «Հայ տան» մեջ կազմակերպել է երկրորդ երեկոն՝ նվիրված պոլսահայ ռոմանտիկ քնարերգու, մանկավարժ, հասարակական գործիչ Սիպիլի (Զաբել Հովհաննեսի Խանջյան, Զապել Ասատուր, 1863–1934) հիշատակին: Էմմա Արսլանյանի բացման խոսքից հետո, Նուրհան Ուզունյանը, «իրեն յատուկ քաղցր լեզուով եւ ուսուցչի վայել համոզիչ ու յստակ ոճով»[24], ունկնդիրներին ծանոթացրել է Սիպիլի կյանքին ու գրական գործունեությանը: Երիտասարդ դերասանների՝ Նադյա և Արշալույս Դշխոյան քույրերի, Վերժին Քեսթեքյանի և փոքրիկ Հերա Աքքիպրիթյանի հաջող խաղարկությամբ ներկայացվել է նաև Սիպիլի «Որբուհի» թատերգությունը:

Նույն թվականի մայիսի 16-ին խնդրո առարկա հաստատությունը «Հայ տան» մեջ կազմակերպել է հայ երաժշտությանը նվիրված երեկո՝ հայ մայրերի պատվին, որի ընթացքում իր առաջին ելույթն է ունեցել նաև Հարություն Թումայանի ղեկավարությամբ ստեղծված նորակազմ մանկական երգչախումբը: Երեկոյի ընթացքում կատարվել են հատվածներ Արամ Խաչատրյանի, Բարսեղ Կանաչյանի, Գուրգեն Ալեմշահի, Աշոտ Սաթյանի և ուրիշների ստեղծագործություններից, ինչպես նաև ժողովրդական երգեր[25]: Իսկ հուլիսի 8-ին՝ չորեքշաբթի երեկոյան, այդ միության նախաձեռնությամբ մոնրեալահայ հասարակությանն առաջին անգամ ներկայացվել է հայերեն կինոֆիլմ՝ Ռիչընթ պատկերասրահում ցուցադրվել է «Հայֆիլմ» կինոստուդիայի արտադրության «Առաջին սիրո երգը»[26]:

---

[22] **Գույումճեան Պ.,** Տաղ՝ ազգային անմահ քերթողապետ, Յովհաննէս Թումանեանէ մինչեւ Մամիկոնեան մշակութային միութիւն, Բուրաստան, Բ. տարի (ամսաթերթի 1965-ի առաջին համարներում Գ-ի փոխարեն թյուրիմացաբար նշվում է Բ):

[23] Տե՛ս Արաքս, Գեղարուեստական երեկոյ նուիրուած՝ անմահ քերթող Յովհաննէս Թումանեանի, նույն տեղում, էջ 22:

[24] Արաքս, Գեղարուեստական երեկոյ նուիրուած քնարերգակ բանաստեղծուհի Զապէլ Ասատուրի (Սիպիլ), Բուրաստան, 1965, թիւ 21, էջ 18:

[25] Տե՛ս Երաժշտական երեկոյ, կազմակերպութեամբ Մամիկոնեան մշակութային միութեան, ի պատիւ մայրերու, Բուրաստան, 1965, թիւ 23-24-25, էջ 16:

[26] Հայկական ֆիլմի ցուցադրութիւն, նույն տեղում, 17:

1965-ի հոկտեմբերի 24-ին՝ կիրակի օրը, տվյալ հաստատությունը, նշել է Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության 300-ամյակը՝ «Հայ տան» մեջ կազմակերպելով հայ թատրոնի պատմությանը նվիրված երեկույթ-հանդես[27]:

Անդրադարձ է կատարվել նաև թարգմանական թատերգություններին: Այդ առնչությամբ Վահրամ Փափազյանի մասին հիշողություններով հանդես է եկել Տիգրան Մելիքյանը, ներկայացվել է «Օթելլո» ողբերգության երրորդ արարի չորրորդ տեսիլը՝ մոնրեալաբնակ սիրված ուսուցիչ Գեղամ Սիմոնյանի (Օթելլո) և Նադյա Դշխոյանի (Դեզդեմոնա) շատ հաջող դերակատարությամբ: Մոլիերի «Ագահի» (արար 5, տեսիլ 5)՝ իր հարստությունից զրկված հերոսի հուզումները և ապրումները ճշմարտացիորեն է ներկայացրել Մարտիրոս Շատախցյանը:

Վերջապես, անդրադառնալով հայ արդի թատրոնի պատմությանը, նշենք, որ Վարդգես Պարոնը և Աիդա Ծերունյանը հաջողությամբ կատարել են Վ. Աճեմյանի «Նա գտել է իր տեղը» ներկայացումէն տեսարան մը»[28]: Այստեղ, հավանաբար, խոսքը գնում է անվանի մանկավարժ, պրոֆեսոր Վարդան Աճեմյանի (1905–1977) թատերական մանրապատման մասին, առավել ևս, որ դա վկայում է նաև երեկույթ-հանդեսի ականատեսներից մեկը[29]:

Ինչպես ամեն տարի, այնպես էլ 1966-ին, «Մամիկոնեան» մշակութային միությունը անդրադարձել է Վարդանանց տոնին՝ փետրվարի 26-ին, կազմակերպելով գեղարվեստական երեկո: Բացման խոսքով հանդես է եկել միության փոխատենապետ Հակոբ Քեսթեքյանը[30]: Այնուհետև, Սոնա Շատախցյանն արտասանել է Վահան Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց», իսկ Դենի Թոփալյանը՝ Մառի Աթմաճյանի[31] «Վարդան Մամիկոնեան» բանաստեղծությունը:

---

[27] Տե՛ս Բուրաստան, 1965, թիւ 27, էջ 22. Հայ թատրոնի ծաղկաքաղը, Բուրաստան, 1965, թիւ 28, էջ 27:

[28] Հայ թատրոնի ծաղկաքաղը, Բուրաստան, 1965, 28, էջ 27:

[29] Տե՛ս **Ներկայ մը,** Մամիկոնեան թատերախմբին գործունեութիւնները «Քուլիս», 1966, № 458, 15 հունվարի, էջ 25:

[30] Գեղարուեստական երեկոյթ Վարդանանց տօնին առթիւ, Բուրաստան, 1966, թիւ 33, էջ 18:

[31] Աթմաճյան, Մառի Միհրանի (1913–1999), սփյուռքահայ բանաստեղծուհի, գրական-հասարակական գործիչ, ծնվել է Բաֆրայում (Թուրքիա): Առաջին համաշխարհային պատերազմից հետո ընտանիքով տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ստացել է նախնական կրթությունը՝ Դպրոցասեր տիկնանց վարժարանում: 1922-ին տեղափոխվել է Հունաստան, որտեղ ավարտելով հայկական նախակրթարանը՝ մեկ տարի հաճախել է Սալոնիկի ֆրան-

Երեկոյի գլխավոր մասը կազմել է Սմբատ Բյուրատի «Վարդանանք» թատերգության չորս տեսարանների ներկայացումը: Ներկայացման ընթացքում Արշալույս Դշխոյանն արտասանել է Ժակ Հակոբյանի[32] «Կանք ու կը մնանք» բանաստեղծությունը, առանձին տեսարաններում հնչած երգերը կատարել է Ա. Գալայճյանի փոքր խումբը, իսկ մեներգով հանդես է եկել Աիդա Ծերունյանը:

Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության 300-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում 1966-ի հոկտեմբերին «Մամիկոնեան» մշակութային միությունը նախաձեռնել և իրականացրել է մի շարք այլ միջոցառումներ: Այսպես, հոկտեմբերի 15-ին միությունը «Հայ տան» մեջ կազմակերպել է մշակութային երեկո՝ նվիրված հայ մանրանկարչությանը: Երիտասարդ պոլսահայ ճարտարագետ Կարո Շամլյանը իր մեկուկես ժամյա բավական հետաքրքիր և դյուրընկալելի դասախոսության մեջ վերլուծել է Մայր Հայաստանում, Կիլիկիայում և տարբեր հայ գաղթօջախներում մանրանկարչական դպրոցների զարգացման հիմնական հատկանիշները, բացատրել այն ազդեցություններն ու փոփոխությունները, որոնք կրել են այդ դպրոցները դարերի ընթացքում[33]:

սիական իգական լիցեյ: 1925-ին տեղափոխվել է Հալեպ, 1928-ին՝ Եթովպիա, իսկ 1929-ին՝ Փարիզ, որտեղ հետևել է Մարգարիտ Բաբայանի երաժշտական և Սորբոնի համալսարանի գրականության դասընթացներին: 1930-ական թվականներից բանաստեղծություններ է տպագրել «Ջանք», «Մշակոյթ», «Անահիտ», «Պայքար», «Բազմավէպ», «Նոր գիր» և այլ պարբերականներում: Հրատարակել է Գողգոթայի շուշաններ (1947), Աստեղաքաղ (1951), Յաւիտենական ուղիներ (1956), Գաղթաշխարհի երգեր (1961), Ոսկի գեղօն (1967), Հրեղէն աշտարակ (1970), Վերջալոյսէն առաջ (1974), Յաւերժական ուղիներով (1974) բանաստեղծությունների ժողովածուները և այլ գործեր: Երկար տարիներ եղել է ֆրանսահայ գրողների միության նախագահը:

[32] Հակոբյան, Ժակ (Ժագ) Ստեփանի, սփյուռքահայ բանաստեղծ, ծնվել է 1917-ին Երուսաղեմում: Փոքր հասակից տեղափոխվել է Եգիպտոս, սովորել Գալուստյան և Պերպերյան վարժարաններում, ֆրանսիական լիցեյում: Ավարտել է Կահիրեի համալսարանը (1942)՝ քիմիկոս-դեղագործի մասնագիտությամբ: 1968-ից հաստատվել է ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Փասադենա քաղաքում: 1938-ին հրատարակել է բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ Գաղտնի ճամբան խորագրով, որն արժանացել է Վ. Թեքեյանի դրական գնահատականին՝ մամուլում: Հետագայում հրատարակել է Մեղրալուսին (1943), Մարդ մը մեռավ (1947, նվիրված Վ. Թեքեյանի հիշատակին), Մեսրոպաշունչ (1947), Վերածնունդ (1949), Ոսկեդափնի (1957), Մասիսածին (1963), Ջահեր (1964), Հայատրոփ (1970, չափածո վեպ), Ուլունքաշար (1983) և այլ ժողովածուներ: Գրել է նաև թատերգություններ՝ հայրենաբաղձության և կարոտի զգացումներով:

[33] **Զարմունի Օ.,** Հայը, Բուրաստան, 1966, թիւ 40, էջ 14:

«Մամիկոնեան» մշակութային միությունը 1967-ին նույնպես հաճախակի կազմակերպել է մշակութային գեղարվեստական երեկոներ: Այսպես, օրինակ, հունվարի 23-ին երկարատև և համառ աշխատանքից հետո կազմակերպել է «Հայ տան» մատենադարանի բացման արարողությունը, իսկ 1967-ի փետրվարի 25-ին, միությունը, հավատարիմ մնալով իր անվանն ու կոչմանը, «Հայ տան» սրահում կազմակերպել է բանախոսական-գեղարվեստական երեկո՝ նվիրված Վարդանանց հերոսամարտի հիշատակին[34]:

1967-ի ապրիլի 8-ին միությունը «Հայ տան» սրահում կազմակերպել է դասախոսական երեկո՝ նվիրված հայ թատրոնին: Բացման խոսքով հանդես է եկել միության ատենապետ Նուրհան Ուզունյանը՝ ներկայացնելով հրավիրված դասախոսի՝ սփյուռքահայ հանրածանոթ դերասան և երգիծաբան Խ. Տետեյանի[35] համառոտ կենսագրականը: Խորեն Տետեյանն իր «Թատերական ակնարկներ եւ յուշեր հայ բեմէն» թեմայով դասախոսության մեջ մանրամասնորեն նկարագրել է հայ թատրոնի ստեղծման պատմությունը: Խ. Տետեյանը հակիրճ ներկայացրել է նաև հայ թատրոնի ականավոր դերասաններ Վահրամ Փափազյանի (1888–1968), Հովհաննես Զարիֆյանի (1879–1937), Հովհաննես Աբելյանի (1865–1936), Արշակ Պենլյանի (1867–1923), Թովմաս Ֆասուլյաճյանի (1843–1901), Հրաչյա Ներսիսյանի (1895–1961) և անզուգական դերասանուհի Սիրանույշի (1857, այլ տվյալներով՝ 1862–1932) կյանքն ու թատերական գործունեությունը՝ դասախոսությունը համեմելով իր անձնական կյանքի հուշերով և զվարճալի դեպքերով:

---

[34] **Մարտիշատ,** Վարդանանցի տօնակատարութիւնը Հայ տունէն ներս, Բուրաստան, 1967, թիւ 42, էջ 20:

[35] Տետեյան, Խորեն (1901–1980), սփյուռքահայ դերասան, սկզբնական կրթությունն ստացել է Զմյուռնիայի Մեսրոպյան և Պոյաճյան վարժարաններում: Փոքր հասակից ունեցել է դերասանական ձիրք և հակում: Զմյուռնիայի «Արտավազդ» թատերախմբի հիմնադիրներից է (1919), եղել է Վ. Փափազյանի և Հ. Աբելյանի խաղընկերը: 1922-ին տեղափոխվել է Սալոնիկ, որտեղ հիմնադրել է հայկական թատերախումբ՝ Հ. Զարիֆյանի մասնակցությամբ: 1930–1963 թվականներին բեմական գործունեություն է ծավալել Կահիրեում, իսկ այնուհետև՝ Կանադայում: Աշխատակցել է նաև «Արևելյան մամուլ», «Կսմիթ», «Արև», «Կես կատակ կես շիտակ», «Պայքար», «Նոր օր», «Ապագա», «Մարմարա», «Քուլիս» և այլ պարբերականներին: Հրատարակել է «Ժպիտ» (1947) խորագրով երգիծական պատմվածքների ժողովածուն և «Երիտասարդի մը յուշատետրը...» (1949) վիպակը, գրել է «Թատերական ակնարկներ» (1963), «Կենսագրական գիծերս» գործերը և մոտ մեկ տասնյակ թատերգություններ, ինչպես նաև թատերգության է վերածել Ե. Օտյանի «Ընտանիք, պատիվ, բարոյական» վեպը, որը հեղինակի ծննդյան 100-ամյակի առթիվ 1968-ին բեմադրվել է Մոնրեալում, Բոստոնում և Պրովիդանսում: 1961-ին Կահիրեում նշվել է Խ. Տետեյանի գրական և թատերական գործունեության 40-ամյակը:

«Մամիկոնեան» մշակութային միության 1967-ին կազմակերպած եզրափակիչ մշակութային երեկոն՝ աշխարհահռչակ երգահան Արամ Խաչատրյանի կյանքն ու գործունեությունը պատկերող կինոնկարի ցուցադրմամբ, կայացել է դեկտեմբերի 9-ին՝ երեկոյան ժամը 9-ին: Բացման խոսքով հանդես է եկել Մարտիրոս Շատախցյանը, իսկ այնուհետև ելույթ է ունեցել միության տարեց անդամ Խորեն Տետեյանը՝ համեմելով իր խոսքը երգիծանքով: Մեկ ժամ տևած կինոնկարը հնարավորություն է ընձեռել օտար ափերում ապրող մեր հայրենակիցներին ավելի մոտիկից ճանաչելու անվանի երգահանին[36]:

Մշակութային միությունը 1968-ին իր կազմակերպած մշակութային միջոցառումները նույնպես սկսել է երգահան Արամ Խաչատրյանի մասին կինոնկարի ցուցադրմամբ: Այն ցուցադրվել է «Հայ տան» սրահում հունվարի 27-ին: Ընդառաջելով ունկնդիրների ցանկությանը, այդ կինոնկարը 1968-ին ցուցադրվել է երկրորդ անգամ՝ մայիսի 18-ին:

Խնդրո առարկա կազմակերպությունը յուրաքանչյուր տարի այս կամ այն կերպ անդրադարձել է Վարդանանց տոնին: 1968-ի փետրվարի 24-ին, շաբաթ օրը՝ երեկոյան ժամը 9-ին, «Հայ տան» սրահում կազմակերպված երեկոյի ընթացքում բացման խոսքով հանդես է եկել միության ատենապետ Նուրհան Ուզունյանը՝ շեշտելով, որ «Վարդանանքը» պետք է ներկայացվի երկու տեսանկյունից՝ պատմական և հոգեկան ու գաղափարական, որը մեծ ազդեցություն է թողել մեր մշակույթի վրա[37]:

Նույն թվականի մարտի 30-ին «Հայ տան» սրահում միությունը կազմակերպել է հուշ-երեկո՝ նվիրված հայ մեծատաղանդ դերասանուհի Սիրանույշի կյանքին ու բեմական գործունեությանը: Երեկոն անցել է հուզմունքի, խանդավառության և զվարթության մթնոլորտում[38]:

1968-ի հոկտեմբերի 19-ին «Մամիկոնյան» մշակութային միությունը, Հայ եկեղեցասեր երիտասարդաց միության մասնակցությամբ, կազմակերպել է գեղարվեստական երեկույթ՝ «Շրջագայութիւն մը հայ մշակոյթի անդաստանին մէջ» նշանաբանով, որի ընթացքում ներկայացվել են մի շարք հայ ականավոր գրողներ և արվեստագետներ: Իսկ 1968-ի նոյեմբերի 23-ին միությունը, եզրափակելով իր տարեկան գործունեությունը, արժանավայել կերպով

[36] Տե՛ս **Մ. Շ.,** Հայկական երեկոյ մը Մոնթրէալի մէջ, Բուրաստան, 1968, թիւ 53, էջ 29–30:

[37] Տե՛ս **Մարտիշատ,** Մամիկոնեան մշակութայինի Վարդանանցը, Բուրաստան, 1968, թիւ 55, էջ 17–18:

[38] Տե՛ս **Մարտիշատ,** Մեծատաղանդ դերասանուհի Սիրանոյշի նուիրուած երեկոյ մը, Բուրաստան, 1968, թիւ 56, էջ 32:

տոնել է քաղաքամայր Երևանի 2750-ամյակը՝ ներկայացնելով քաղաքի անցյալը և ներկան արվեստի նմուշներով, արտասանությամբ, երաժշտությամբ, լուսապատկերներով և նկարների ցուցադրմամբ[39]:

Վերջում նշենք, որ որոշ աղբյուրներում, որպես միության գործունեության սկիզբ, հիշատակվում է 1959 թվականը[40]: Սակայն, մեր կարծիքով, որպես այս հաստատության գործունեության սկիզբ, պետք է ընդունել 1962 թվականը, ինչի մասին տեղեկանում ենք «Բուրաստանից»[41]: Իսկ «Մամիկոնյան» թատերախումբը, մեկ անգամ ևս նշենք, գործում է 1962-ի փետրվարից: Այդ մասին հիշատակվում է նաև «Քուլիսում»[42]: Հետևաբար, մեր կարծիքով, միանգամայն անհասկանալի ու անընդունելի է «Մամիկոնեան» մշակութային միության գործունեության սկիզբ համարել 1959 թվականը: Լավագույն դեպքում այս հաստատության գործունեության սկիզբ կարելի է ընդունել 1962 թվականը («Մամիկոնեան» թատերախմբի գործունեության սկիզբը), իսկ ավելի ճշգրիտ՝ 1964 թվականը: Ցավոք, «Բուրաստան» ամսաթերթի էջերում նույնպես տեղ են գտել իրարամերժ կարծիքներ և վրիպումներ: Այսպես, օրինակ, եթե ամսաթերթի 1964-ի սեպտեմբերյան համարում իրավացիորեն մատնանշվում է, որ «Մօնթրէալի «Մամիկոնեան թատերախումբ»-ը որ ներկայիս երեք տարեկան է...»[43] (հիշենք, որ թատերախումբը հանդիսացել է «Մամիկոնեան» մշակութային միության հիմքը՝ ստեղծման սկիզբը), իսկ 1966-ի փետրվարի 26-ին կայացած գեղարվեստական երեկոյի բացման խոսքում միության փոխատենապետ Հակոբ Քեսթեքյանը նույնպես իրավացիորեն «յիշեցուց ներկաներուն թէ օրուան թուականը կը զուգադիպէր Մամիկոնեան Մշակութային Յանձնախումբի կազմութեան չորրորդ տարեդարձին»[44], ապա «Բուրաստանի» 1980-ի համարներից մեկում կարդում ենք, որ 1980-ի

---

[39] Տե՛ս Մամիկոնեան մշակութային հանձնախումբ, Բուրաստան, 1969, թիւ 66, էջ 28–29: **Ազնաւուր Ա.,** Տպաւորութիւններ հոգեկան խնճոյքէ մը, Բուրաստան, 1968, թիւ 61, էջ 13:

[40] Տե՛ս, օրինակ, Հայ Սփյուռք հանրագիտարան, Ե., 2003, էջ 338:

[41] Մամիկոնեան մշակութայինի Վարդանանցը, Բուրաստան, 1965, թիւ 23–24–25, էջ 15:

[42] Տե՛ս Ան. Եմ, Մօնթրէալի Մամիկոնեան թատերախումբը երեք տարեկան. Աշխարհի զանազան կողմերէ գաղթած արուեստասէրներ կը ջանան վառ պահել հայ լեզուն եւ մշակոյթը, Քուլիս, 1964, № 425, 1 սեպտեմբերի, էջ 17:

[43] Մօնթրէալի «Մամիկոնեան թատերախումբ»-ի կոչը հայ երիտասարդութեան, Բուրաստան, 1964, թիւ 15, էջ 15:

[44] Գեղարուեստական երեկոյթ Վարդանանց տօնին առթիւ, Բուրաստան, 1966, թիւ 33, էջ 18:

մարտի 10-ին եկեղեցու «Մարի Մանուկյան» սրահում տեղի է ունեցել «Մամիկոնյան» մշակութային միության «քսանամյա» գործունեությանը նվիրված հանդես: Այդ կապակցությամբ հրատարակվել է «Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբի (Սկզբնական շրջանին Մամիկոնեան Թատերախումբի) անցնող քսան տարիներու ընթացքին տարած գործունէութեան, զանազան դրուագները ցոյց տուող, գեղեցկօրէն եւ ճաշակով պատրաստուած յիշատակի գրքոյկ մը...»[45]: Ցավոք, մեզ չհաջողվեց գտնել այդ գրքույկը, որպեսզի տեսնեինք, թե ինչ «դրվագներ» կան միության 1959–1961 թվականներին ծավալած գործունեության վերաբերյալ:

Եզրափակելով մեր խոսքը Մոնրեալի Հայաստանյայց առաքելական Սուրբ եկեղեցու «Մամիկոնեան» մշակութային միության և դրա թատերախմբի գործունեության վաղ շրջանի մասին, վստահությամբ կարող ենք արձանագրել, որ, չնայած բազում դժվարություններին, տարբեր երկրներից Մոնրեալում հանգրվանած և օտար միջավայրում գործող մեր հայրենակիցները, որոնցից յուրաքանչյուրն «իրեն հետ բերած է հայ բարքը, հայ մշակոյթը, հայ լեզուն եւ հայ ապրելու վճռական կամքը»[46], կարողացել են կատարել հսկայական ազգապահպան աշխատանք՝ ևս մեկ անգամ ապացուցելով, որ հայ էթնոսը ի վիճակի է դիմակայելու ամեն մի դժվարության, հաղթահարելու ցանկացած արգելք և ցանկացած վայրում ստեղծել մի փոքրիկ Հայաստան:

Ճամբայ կը բանայ, կ'ընթանայ նորէն:[47]

THE ACTIVITY BY "MAMIKONYAN" CULTURAL UNION OF THE ARMENIAN APOSTOLIC HOLY CHURCH IN MONTREAL (1962–1968)

BEKARYAN A.

Summary

Key words: *Diaspora, Armenian community in Montreal, church, "Mamikonyan" cultural union, "Haitoon" ("Armenian house"), theatrical troupe, "Boorastan" review.*

[45] **Մամիկոնեան Վ. Ք.,** Մշակ. Յանձնախումբի 20-Ամեակի Հանդիսութիւնը, Բուրաստան, 1980, թիւ 192–193, էջ 13:

[46] Վազգէն վարդապետ (հովիւ), Առաջին պատգամս, Բուրաստան, 1967, թիւ 42, էջ 1:

[47] **Զարմունի Օ.,** նշվ. աշխ.:

It was in the middle of the 1950s that the Armenians settled down in Montreal and united around the Armenian Apostolic Church. The present article provides a comprehensive analysis of the activity carried out by "Mamikonyan" cultural union (theatre company) at the early stage of its formation and development (1962–1968). Our research mostly addresses the theatre productions in Armenian, literary and musical evenings dedicated to well-known figures of Armenian culture and other cultural events aimed at preserving Armenian ethnic identity. There exist certain inexactitudes concerning these events that were covered both in periodical and encyclopedic issues. Through the analysis of the primary sources, the study has identified the given inaccuracies in the respective publications. The monthly "Boorastan", covering the ecclesiastical and cultural events in the community life of the Armenian Diaspora of Montreal was first issued in 1963 but not in 1964 and "Mamikonyan" cultural union under the auspice of the Armenian Apostolic Church was not founded in 1959 but in 1962.

ДЕЯТЕЛЬНОСТЬ КУЛЬТУРНОГО СОЮЗА «МАМИКОНЯН» АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ СВЯТОЙ ЦЕРКВИ МОНРЕАЛЯ (1962–1968)

БЕКАРЯН А.

Резюме

Ключевые слова: *диаспора, монреальская армянская колония, церковь, культурное общество «Мамиконян», «Хай тун» («Армянский дом»), театральная труппа, журнал «Бурастан».*

В Монреале армяне обосновались, главным образом, с середины 1950-х годов и сплотились вокруг Армянской апостольской Святой церкви. Настоящая статья являет собой обобщенный анализ деятельности культурного союза (театральной труппы) «Мамиконян» на начальном этапе его формирования и развития (1962–1968). Предметом нашего исследования стали театральные постановки на армянском языке, литературные и музыкальные вечера, посвященные известным армянским деятелям культуры, а также иные культурные мероприятия, призванные сохранить

армянскую национальную самобытность. В материалах об этом, представленных как в периодике, так и в ряде энциклопедических изданий, имеются некоторые неточности, которые нам удалось выявить при ознакомлении с первоисточниками. В частности, ежемесячная церковная газета «Бурастан», освещающая события церковной, общинной и культурной жизни армянской диаспоры Монреаля, стала издаваться не с 1964-го, а с 1963-го года; культурный союз «Мамиконян» при Армянской апостольской церкви был создан в 1962-м году, а не в 1959-м.